

Սակայն մեզ համար տուեալ դէպքում կարեւոր է ոչ այնքան Աղուանքի եկեղեցական շրջանակների պատասխան պահանջի պատմական հիմնաւորութիւնը, որքան այն, որ այդ պայմանը փաստօրէն ընդունուել է<sup>149</sup>: Եւ սա, կարծես թէ, ակնյայտօրէն ցոյց է տալիս ոչ այլ ինչ, քան այն օրինակելի խնամքն ու խորաթափանցութիւնը, որոնցով ժամանակի ընտրախաւի պատասխանատու ներկայացուցիչները մօտենում էին էթնիկ համախմբութեան համար վտանգ ներկայացնող հասարակական միտումներին եւ անհրաժեշտութեան դէպքում չէին խորշում ընդհուպ ամենալուրջ փոխզիջումների դիմելուց: Այստեղ տեսնում ենք, որ փոխզիջումն արտայայտուել է անգամ այնպիսի նրբանկատ ոլորտում,

ինչպիսին եկեղեցական կառոյցի աստիճանակարգն էր (իսկ վերեւում նշեցինք նմանատիպ մի իրողութիւն աշխարհիկ ոլորտում, երբ կենտրոնական Բագրատունեաց իշխանութիւնն սկսեց ճանաչել ու ինվեստիտուրայով ապահովել տեղական մանր թագաւորութիւններին): Ի դէպ, ինչպէս արդէն նկատուած է գրականութեան մէջ, հէնց Մատթէոս Ուռուայեցու՝ ԺԲ դ. առաջին կէտում շարադրուած «ժամանակագրութեան» արձանագրումների բովանդակութիւնից ու ոճից է ամենից լաւ երեւում (հմմտ., օր. «աշխարհն Աղուանից, որ ասի խորին աշխարհ Հայոց»<sup>150</sup>), որ Ժ դ. վերջին իր՝ ըստ ամենայնի, բարձրակէտին հասած մասնատողական ճգնաժամային գործընթացը ԺԱ դարի ընթացքում թուլացել էր ու մարել<sup>151</sup>:

149 Հմմտ. А. А. Аюпян. *Албания-Алуанк*, էջ 262-263:

150 Մատթէոս Ուռուայեցի, *ժամանակագրութիւն*, էջ 230:  
 151 Տե՛ս, օր.՝ Ա. Շ. Մնացականեան, *Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը*, էջ 221-233:

ՔՈՒՍՏԻ ԽՈՐՈՒԱՐԱՆԻ ՆՈՏԱՐՏԱ ԵՒ ԾԻՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ԾՈՒՐԶ

Յովհաննես Խորիկեան

Ե. դարի հայոց աշխարհագրական երկի՝ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութիւնում Սասանեան Իրանի Քուստի Խորուարանի կամ Արեւմտեան՝ Կողմի մասին գրուած է. «Աշխարհ Պարսից: Պարսից աշխարհ ընդ չորս բաժանի այսպէս. Քուստի Խորասան, որ է կողմ արեւմտեայ, յորում աշխարհք ինն. Մայմասպտան, Միհրանքատակ, Քարշկար, Պարմական, Երան, Սանքար-Կաւատ, Նոտարտայ, Ծիրական, Մայծի-նըստեհ»<sup>2</sup>: Իսկ «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութիւններից մէկում նոյն երկրամասը նկարագրուած է այսպէս. «Եղիմացիք, որ կոչին Քուստիկք խորայարանք, յելից կալով Դիղաթայ եւ ի մտից՝ Պարսից: Եւ ունին Եղիմացիքն աշխարհս փոքունս զայսոսիկ. զՍուժաստան, զՄաժ, զՄասպան<sup>3</sup>, զՄիհրան, զՔրտակ, զՔաշքար, զԳարմական, զԵրանաստան, զԿարկաւատ,

զՆոտատր, զԾիրական, զՄարծին, զԱրհեն: Ունի գետս երիս, քաղաքս հինգ՝ յորոյ մին է Գունդիշպուհ, յորում զաղնիւ շաքարն է գործեն. եւ կղզիս երկու հանդէպ իւր ՚ի պարսկային ծոցին»<sup>4</sup>: «Աշխարհացոյց»-ի համառօտ միւս խմբագրութիւնում էլ կարգուած ենք. «Երեսն եւ եւթներորդ՝ Եղիմացիք են, որ կոչին Քուստի Խորասարան, յելից կալով Դիղաթայ եւ ի մտից՝ Պարսից: Եւ ունին Եղիմացիք աշխարհս փոքունս, զայն ունին Եղիմացիք աշխարհս փոքունս, զայսոսիկ. զՍուժաստան, զՄայ, զՄասպան, զՄիհրանքատակ, զՔաշկար, զՊարմական, զԵրանաստան, զՔարկաւատ, զՆոտարտայի-րական, զՄարծինսհեն: Ունի գետս երիս եւ քաղաքս հինգ՝ յորոց մին է Գունդիշպուհ, յորում զաղնիւ շաքարն գործեն: Ունի/կղզիս երկու հանդէպ իւր ՚ի պարսկային ծոցին»<sup>5</sup>: Սոյն աշխատանքի խնդիրը

1 Xwarwarān - «արեւմուտք». տե՛ս В. Г. Луконин, *Древний и раннесредневековый Иран*, М., 1987, п. 139; J. Marquart, *Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i*, Berlin, 1901, S. 17-18. հմմտ. Բ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի բրեշխութիւնների եւ բրեշխութեան հաստատութեան շուրջ*, ՀԱ, 2001, թիւ 1-12, վիտնա, էջ 171, ծնթ. 39: Խորասանի անանութիւնը Խորասանի (xwarāsān - արեւելք) պատճառ է դարձել, որ Խորասան կամ Խարասան անունը սխալմամբ արտագրուէր Խարասան, որից էլ արդէն կը ստացուէր Խորասան:

2 Աշխարհացոյց Մովսէսի խորեանացոյ յաւելածովք նախնեաց, հրատ. Ա. Սուքրեան, Վեճեփիկ, 1881, էջ 40: Տե՛ս Աստեճազիրը Հայոց, Բ հատոր, Է. դար, Անթիլիսա-Լիբանան, 2003, էջ 2157:

3 Նոր ձեռագրերում Մայպուպան (տե՛ս К. П. Патканов, *Армянская География VII века*, СПб, 1877, с. 65. Յաւելում՝ «Աշխարհացոյց Է դար», էջ 22): Միջոտ ձեւն է Մասպտան:

4 К. П. Патканов, *Армянская География...*, с. 64-66. Յաւելում՝ «Աշխարհացոյց Է դար», էջ 22-23: Քուստի Խորուարանի՝ որպէս Էլամացիների Բուստի Խորուարանի յիշատակութիւնը համառօտ խմբագրութեան պայմանաւորում է այն հանգրուանը, որ «Աշխարհացոյց»-ի յետագայ գրիչները Սասանեան Իրանի վարչական բաժանումը չորս երկրամասերի կամ կողմերի նույնացնումը չորս երկրամասերի հիմնական էթնիկական լեզուներին՝ Քուստի Կարկաւատ (Մարք), Քուստի Խորասարան-Էլամացիներ (Պարսք), Քուստի Խորասան-արիներ (Արիք): Միեւնոյն ժամանակ, Խորասան-արիներ (Արիք): Միեւնոյն ժամանակ, ինչպէս «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութիւնից, Խորասանում՝ Էլամացիների երկիրը, որը Քուստի Նեմոռի մէջ էր, վարչական վերածելուների հետեւանքով ընդգրկուում է Արեւմտեան Քուստի մէջ, ինչը նույնպէս պէտք է պատճառ հանդիսանար, որ Քուստի Խորուարանը համարուէր Էլամացիների երկրամաս:

5 Ա. Գ. Արքախանեան, *Անանիա Շիրակացոյ մատենագրութիւնը*, Երեւան, 1944, էջ 352:





յուսմ Շիրքենդի)<sup>30</sup>: Պարզելով Նոր Շիրականի տեղադրությունը, բնականաբար, հարց է ծագում՝ արդեօ՞ք Նոր Շիրականը կապում է Սասանեան Իրանի Քուստի Խորուարանի կազմում յիշատակուած Շիրականի հետ: Մեր կարծիքով՝ Քուստի Խորուարանի Շիրականը եւ Նոր Շիրականը չեն կարող նոյնանալ Հէնց միայն այն պատճառով, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակի եւ յետագայ գրիչների համար սրանք վարչական, աշխարհագրական տարբեր հասկացություններ են եղել, եւ Քուստի Խորուարանի կազմում Շիրականի յիշատակումը Հէնց խօսում է այն տարբերութեան մասին, որ կար հայկական Նոր Շիրական բղեջխութեան եւ Շիրական երկրի միջեւ: Այս իրողությունը բացատրում է Սասանեան Իրանի վարչաքաղաքական բաժանման համակարգի առանձնայատկություններով, որոնց մասին վկայում են սկզբնաղբերների տեղեկությունները: Արդ, ինչ տեղեկություններ կան հին աղբերներում Շիրականի մասին:

Պիրիոս Աւագը բերում է հետեւեալ տեղեկությունը, որը ներկայացնում ենք Յ. Մարկուարտի ուղղումներով. «Արդ՝ Գորգիացիներին հարեւան են Ազոնները [ըստ Մարկուարտի՝ Արզոնները], որոնց միջով հոսում է Զերբիս գետը [ըստ Մարկուարտի՝ Բոհտան-Սուն] եւ թափում Տիգրիսի մէջ. Ազոններին հարեւան են լեռնաբնակ Սիլիկները [ըստ Մարկուարտի՝ Sidices=Silices] եւ Օրոնտները, որոնց արեւմտակողմում գտնուում է Գաւգամելա քաղաքը, ինչպէս եւ Սուերը ժայռերի մէջ: Սիլիկների վերելումն են Սիտրերը [ըստ Մարկուարտի՝ Σίτραι=Sitrae], որոնց միջով հոսում է Հայաստանից Լիւկոս գետը [ըստ Մարկուարտի՝ Զաւը]. Սիտրերից գէպի

30 Բ. Յարութիւնեան, Մեծ Հայքի բղեջխութիւնները..., էջ 113-114, Բ. Յարութիւնեան, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգը..., էջ 346:

մեռնային արեւածաղը գտնուում է Ազոխիս քաղաքը (իմա՝ Զախոն - Խ. Յ.)»<sup>31</sup>: Յ. Մանանդեանը կիսում է սիտրերի ուղղումը սիգրերի եւ Սիգրիանէ երկիրը տեղադրում է այժմեան Սիգրիկանի եւ Ռեւանդուզի հիւսիսակողմում եւ Մեծ Զաք գետի վերին հոսանքի շրջաններում, այսինքն՝ նոյնացնելով Նոր Շիրական երկրին<sup>32</sup>, ենթադրելով նաեւ, որ Նոր Շիրականի հին Օիգրիսան անունը Օիգոն ձեւով պահպանուել է Ղեւոնդի մօտ (հեղինակը Զիդոնը ուղղում է Օիգոն)<sup>33</sup>:

Ստրաբոնի Սիգրիանէն նոյնպէս կապում է Սիգրեր-Շիգրերի հետ. «Առաւել լայնութեան Մարաստանը, ըստ երեւոյթին, հասնում է Զազրոսի լեռնանցքից (որը կոչուում է Մարական դռներ) Սիգրիանէի միջով մինչեւ Կասպիական դռները, այն կազմում է 4100 ստադիոն»<sup>34</sup>: Ինչպէս կարելի է եզրակացնել այս տեղեկությունից, Սիգրիանէն մտել է Մարաստանի մէջ՝ Մենք հակուած ենք կարծելու, որ Մարական դռները համապատասխանում են ներկայիս Շինակի լեռնանցքին, որն էլ իր հերթին նոյնացնում ենք 298 թ. Մծբնի պայմանագրում յիշատակուած Զինթա ամրոցին, որը Հայաստանի հարաւային եզրն էր Մարաստանի սահմանում<sup>35</sup>: Կասպիա-

31 J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen. Wien, 1930. S. 337.  
 32 Յ. Մանանդեան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտութիւններ, էջ 308-309:  
 33 Նոյն տեղում, էջ 310:  
 34 "The Geography of Strabo" (պատմաբան՝ Strabo), with an English translation by H. L. Jones, in eight volumes, London, 1969 (Loeb Classical Library). XI, XIII, 8. Ս. Երեմեանի կողմից Ստրաբոնի յիշատակած Սիմբակէի (XI, XIII, 2) սրբագրումը Սիգրիակէ (Ս. Երեմեան, Հայաստանը ըստ Աշխարհացոյց-ի, Երեւան, 1963, էջ 67) կասկածելի է: Սիմբակէ անունը յիշեցնում է Սիմբատ կամ Սմբատ անունը:  
 35 Petrus Patricius. Fragm. 14 (Dindorf. Historici graeci minores, I, p. 443). Ս. Երեմեանը Օիգոն-Օիգրիանէն տեղադրում է Եկրատանից հիւսիս-

կան դռները գտնուել են Ռագայի (ներկայիս Ռէյլը) մօտ: Ուրեմն, ըստ Ստրաբոնի, Շինակի լեռնանցքը նոյնպէս մտել է Սիգրիանէի մէջ: Ինչպէս տեսնում ենք, Ստրաբոնը Սիգրիանէն տեղադրում է Մարաստանի կազմում, հետեւաբար կարծում ենք, որ Հայաստանի ծայր հարաւ-արեւելքում Շիրական բղեջխութիւնից դուրս էր մնացել սիգրեր-շիգրերի Օիգրիսան կոչուած երկրի արեւելեան մասը, որը շարունակում էր մնալ Մարաստան-Ատրպատական երկրի կազմում եւ բաւականին ընդարձակ տարածք ունէր: Ըստ այդմ էլ, ինչպէս վերելում նշեցինք, բղեջխութիւնն ի սկզբանէ կոչուել է «Սահմանակալն ի Շիրական կողմանէն», այսինքն՝ բղեջխութիւնն այդպէս էր կոչուում՝ սահմանակցելով Մարաստան-Ատրպատական երկրի կազմում մնացած Սիգրիանէ-Շիրականին:

Պտղոմէոսի Սիգրիանիկէն<sup>36</sup> (կարգա՝ Սիրիգանիկէ)՝ որպէս Մարաստանի չորս նահանգներից մէկն, ըստ էութեան, նոյնպէս

կապում է Ստրաբոնի Սիգրիանէի հետ: Սիգրիանէի հետ, թերեւս, կապուած են նաեւ Պտղոմէոսի Տիգրանա (Սիգրանա) եւ Սարակա (Սիրակա) տեղանունները Մարաստանում<sup>37</sup>: Շիգրիա-Սիրագանները համեմատում ենք ասուրական արձանագրութիւններում հանդիպող Շիգրակա-Տիգրակա-Սիգրիա-Սիգրինա-Տիգրիշ տեղանուն հետ, որը լայնօրէն հանդիպում է Մարաստանում եւ յարակից տարածքներում եւ քննութեան են յարակից տարածքներում եւ քննութեան են առնուել է. Գրանտովսկու կողմից<sup>38</sup>: Ք. 821 թուականի էպոնիմների ցուցակում յիշատակուած Սիգրիսը՝ Նաիրիի թագաւորներից մէկի տիրոյթը<sup>39</sup>, է. Գրանտովսկին տեղադրում է Սունբի երկրի շրջանում կամ սրանից արեւելք<sup>40</sup>, այսինքն՝ Ռեւանդուզի հարաւ-արեւելք: Այսպիսի տեղադրութեան պարագայում կարող ենք եզրակացնել, որ Սիգրիսը մտել է Մանայի թագաւորութեան մէջ կամ սահմանակից է եղել վերջինիս<sup>41</sup>: Ինչպէս տեսնում ենք, Ստրաբոնի

37 Նոյն տեղում, VI, 2, 9; VI, 2, 10. Հմմտ. R. Hewsen, ԱԶ. աշխ., էջ 301:  
 38 Յ. Грантовский, Ранняя история иранских племен Передней Азии, Москва, 1970, с. 241-245. Մեր կարծիքով՝ Բեհիսթունի արձանագրութիւնում յիշատակուած հայկական Տիգրայ տեղակայումը հայկալե կապում է Սիգրիսան-Օիգրիսանի հետ (տե՛ս Յ. Խորիկեան, Սատրապական Հայաստանի արեւմտեան եւ հարաւային սահմանները, ՊԲՀ, 2005, թիւ 3, էջ մ. թ. ա. VI-IV դարերում): ՊԲՀ, 2005, թիւ 3, էջ 191): Նշում տեղանունների հետ, հասանաբար, կապում է նաեւ կրմանում յիշատակուած Սիրաքանը (տե՛ս Արաքական աղբիւրներ, Գ. Արաքանը (տե՛ս Արաքական աղբիւրներ, թարգմ. բնագործ. մատենագիրներ, Թ-Ժ դպրեր, թարգմ. բնագործ. մատենագիրներ, Թ-Ժ դպրեր, թարգմ. բնագործ. մատենագիրներ, Ս. Տեր-Ղեւոնդեանի, Երեւան, 2005, էջ 513): Հմմտ. Սիսական-Սիսաքան, Օիգրակ-Սիսաքան:  
 39 D. Luckenbill. Ancient Records of Assyria and Babylonia. v. II. Chicago, 1927. p. 432: И. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту. «Вестник древней истории», 1951, № 2, с. 305.  
 40 Յ. Грантовский, ԱԶ. աշխ., էջ 190:  
 41 Մանայի սահմանների մասին տե՛ս Н. Арутюнян. Топонимика Урарту, Ереван, 1985, с. 78, 135.

Օսիգանից արեւելք (տե՛ս Ս. Երեմեան, Հայկական պետութիւնը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում (93-66 թթ. մ. թ. ա.), քարտեզ, Երեւան, 1979): Ըստ Էուրեան, ուսումնասիրողը Մարական դռները նույնացրել է Կարիսի եւ Խալախի միջեւ գտնուող Զազրոշի լեռնանցքին, սակայն Օիգակի լեռնանցքի հետ նույնացնում Մարաստանի տարածքն արեւմուտքից արեւելք ուղղութեամբ էլ ատելի ընդարձակ տարածք է գրաւում, քանի որ համաձայն Ստրաբոնի տեղեկութեան՝ Ուրմիոյ լիճը գտնուել է Մարաստանի կազմում (XI, XIII, 2): Եկրատանից հիւսիս Օիգրական երկրի տեղորոշումը կասկածելի է, քանի որ վերջինս հիւսիս-արեւմուտքում անմիջապէս սահմանակից կը լինի Ուրմիոյ լճից հարաւ գտնուող Սիգրիսանէ երկրին, որի տեղադրութիւնը հաստատում է սկզբնաղբիւրների տեղեկութիւններով: Մեր կարծիքով՝ հոռետեսական քարտեզագիրների՝ Կասպից ծովը թափուող Սիգրիս գետի (J. Marquart, Erānsahr, S. 221) անունը կապում է Սիգրիսանէ երկրի հետ, որտեղից թխել են գետի ակունքները: Հետեւաբար, Սիգրիսը նույնանուն է Ամարդոս գետին (Աերկայունս՝ Կրզլուղէն):  
 36 Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I-III, Lipsiae, 1843-1845, VI, 2, 6.

Միգրիանէն աշխարհագրորէն ծածկում է նաև Միգրիա երկիրը, ընդ որում, դատելով սկզբնաղբիւրների տեղեկութիւնների համադրումից, աստուրական աղբիւրների Միգրիաը տարածուել է Միգրիանէ երկրի արեւմտեան մասում, որը Ստրաբոնի ժամանակներում արդէն Մարաստանի մաս կազմող Միգրիանէի կազմում չէր, ընդ որում՝ ամասեցի աշխարհագրէտը նշում է, որ հարաւում Մարաստանը հասնում է մինչև Ապոլլոնիա տիս եւ Ջագրոսի լեռներ, իսկ արեւմուտքում սահմանակից է ատրպատականցիներին եւ հայերի մի մասին<sup>42</sup>: Հայերի հետ Մարաստանի սահմանակից լինելն, ըստ երեւոյթին, վերաբերում է կամ Հայաստանի քաղաքական հզօրութեան ժամանակներին, կամ էլ աւելի ուշ արդէն Մարաստանը հայերի հետ սահմանակցել է Ուրմիոյ լճից հարաւ ընկած շրջանում: Բերում տեղանունների մէջ առկայ Սիր կամ Սիգր արմատը կապում է աւեստերէնում, հին, միջին եւ նոր պարսկերէնում, էլամերէնում վկայուած սխտոր բառի հետ, որը պահպանուել է նաև հնդկերէնում (որպէս բանջարաբոյս՝ ուտելի արմատներով եւ տերեւներով, նաև ցեղանուն)<sup>43</sup>: Այսպիսի ստուգաբանութիւններն, անշուշտ, թոյլ են տալիս տեսնելու հայկական Նոր Շիրական բրեշխութեան անուան ծագումնաբանական կապն իրանական աշխարհի հետ, յատկապէս եթէ նկատի ունենանք, որ լեզուական ազդակցութիւնը հաստատում է նաև աշխարհագրական տեղորոշումներով: Մեծ Հայքի թագաւորութեան կազմում գտնուող սիգրեր-սիրականների երկիրն ընդգրկում էր հին աղբիւրների Միգրիանէ երկրի հիւսիսային մասը, որի մի հատուածը, համաձայն վերելում կատարուած քննութեան, գտնուում էր Փոքր Ջաբի վերին հոսանքի շրջաններում, հետեւաբար Միգրիանէն իր տարածքով հիմնական

42 Strabo. XI, XIII, 6.  
43 Մանրամասն տե՛ս Յ. Грантовский, Գշ. աշխ., էջ 152, 243-245:

նում համապատասխանում էր Հերոդոտոսի յիշատակած Մատիենէ երկրին<sup>44</sup>:

Այժմ անցնենք Սասանեան Իրանի Արեւմտեան քուստում յիշատակուած Շիրականի տեղադրութեանը, որն, անկասկած, ուղղակիորէն չնոյնանալով Շիրականի բրեշխութեանը՝ միեւնոյն ժամանակ տարածքային առումով կապուած է վերջինիս հետ: «Գիրք Թղթոց»-ում կայ մի հետաքրքիր տեղեկութիւն, որն ուսումնասիրողներին կողմից միանշանակ չի ընդունուել: Բարդէն կաթողիկոսի «Թուղթ Հայոց Ի Պարսս, առ ուղղափառս»-ում գրուած է: «Սրբասէր եւ ճշմարտասէր, եւ սուրբ հաւատոց, եւ առաւել Քրիստոսիւ ծառայեցելոց. տէրանց մերոնց եւ եղբարց սրբոց հաւատակցաց... եւ այլ հաւատացեալ քրիստոնեայք, Նոշիրականին ի Նինուէ նահանգ»<sup>45</sup>: Առաջին եզրակացութիւնն այս տեղեկութիւնից այն է, որ Նոշիրականը Նինուէի նահանգի կազմում եկեղեցական եւ վարչական առանձին միաւոր է եղել: «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութիւնում գրուած է հետեւեալը. «լզ. Արուաստան, որ կոչի Ասորեստան՝ այս ինքն Մուծղ, յելից կալով Միջագետաց առ երկ Հայոց. ունի լերինս եւ գետս, եւ քաղաք զՆինուէ»<sup>46</sup>: Ինչպէս տեսնում ենք,

44 Մատիենէ երկրի տեղադրութեան մասին մանրամասն տե՛ս Բ. Յարութիւնեան, Աքեմենեան Պարսկաստանի XVIII սատրապութեան տեղադրութեան շուրջ, - ՀԱ, Վիեննա, 1999, թիւ 1-12, էջ 55-65, Յ. Խորիկեան, Աքեմենեան Պարսկաստանի XVIII սատրապութեան մատիենեքի տեղադրութեան շուրջ, - Մերձատր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, XXVI, Երևան, 2007, էջ 25-35:  
45 Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 41: Բէյթ Նուհարան Բեդաղարայ ձեռով յիշատակում է նաև ասորական վարքերից մէկի հայերէն հիմնարկմանը (տե՛ս Արքահամու Խոստովանողի վկայք Արեւելից, աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի, Լ՛ջմիածին, 1921, էջ 235):  
46 Կ. Ս. Ստրանով, Армянская География VII века, с. 64. Յաւելում՝ «Աշխարհացոյց Լ՛ դարու», էջ 22. Ա. Գ. Արքահամեան, Գշ. աշխ., էջ 352:

«Գիրք Թղթոց»-ում յիշատակուած Նինուէի նահանգը համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան Արուաստանին, որի սահմանը հիւսիսում հասնում էր մինչև Հայաստան, իսկ հիւսիս-արեւմուտքում՝ մինչև Մծբին<sup>47</sup>: Այսպիսով՝ Արուաստանը համապատասխանում է Ասորեստանին, յունահռոմէական հեղինակների Ադիաբենէին, հարաւում հասնելով մինչև Նինուէի շրջանը: Ընդ որում, աշխարհագրորէն Տիգրոնը, Սելեւկիան նոյնպէս մտել են Ասորեստանի մէջ<sup>48</sup>, այսինքն՝ նշուած սահմաններում Ասորեստանը համապատասխանում է Տիգրոնի կամ Արեւելքի կաթողիկոսութեանը, որը 410 թ. բաժանուած է վեց թեմերի<sup>49</sup>: Կապուած նահանգների ցուցակից պարզուած է, որ Ասորեստանն ընդգրկում էր Մեսենան, Սուսիանան, Մեդիան, Ադիաբենէն, Արբայեստան-Արուաստանը, Անապատի եւ Պարսից ծոցի երկրամասը<sup>50</sup>, այսինքն՝ այն բոլոր երկրները, որոնք ներկայացան իրենց կախկոպոսներով 410 թ. Տիգրոնի եկեղեցական ժողովին: Հետեւելով կրօնական իրենց հասկացութիւններին՝ ասորի պատմիչները Ասորեստանի փոխարէն ամբողջ այդ երկրամասն անուանել են Բէյթ-Արամայէ, որը եկեղեցական հասկացութիւն էր<sup>51</sup>: Հետեւաբար, աշխարհացոյցեան Արուաստանը վարչական առումով ընդգրկում է ասորական աղբիւրների Մծբինի եւ

47 Փաւստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, էջ 204, 212: Նշենք, որ Ագաթանգեղոսի մօտ Արուաստանը Մծբինի շրջանն է, իսկ Ասորեստանը համապատասխանում է Ադիաբենէին (տե՛ս Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, էջ 484):  
48 Փաւստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, էջ 84, 208, Մովսէս Խորենացի, էջ 208, Honigmann E. et Maricq A., Recherches sur les Res Gestae divi Saporis, Bruxelles, 1953, p. 43.  
49 Հ. Մելքոնեան, Գշ. աշխ., էջ 219:  
50 Honigmann E. et Maricq A., Գշ. աշխ., էջ 45:  
51 Հ. Մելքոնեան, Գշ. աշխ., էջ 222-223:

Արբելայի մետրապոլիտութիւնների տարածքները, որոնցից առաջինի մէջ մտնում էին Արգնի, Կարդուի, Բէյթ-Ջագրէի, Բէյթ-Ռախիմայի, Բէյթ-Մոկսայի, իսկ երկրորդի մէջ՝ Բէյթ-Նուհարայի, Բէյթ-Բագաշի, Բէյթ-Դասէնի, Ռամոնի, Բէյթ-Մահկարտի, Դաբարինոսի կախկոպոսութիւններն էլ<sup>52</sup>: Նշուած մետրապոլիտութիւններն աշխարհագրորէն տարածուել են Բէյթ-Արբայէի եւ Բէյթ-Խեղայաբ-Ադիաբենէի սահմաններում:

Արբելայի մետրապոլիտութեան կախկոպոսութիւններից մեկ համար հետաքրքրութիւն են ներկայացնում Բէյթ-Նուհարայի, Բէյթ-Դասէնի, Բէյթ-Մահկարտի եւ Կախկոպոսութիւնները: Եթե՛ն Բէյթ-Նուհարայի տեղադրել է Տիգրիսի, Խաբուրի, հարան տեղադրել է Ջագրէի միջոցով Ղարբիսի եւ Ջագրէի միջոցով Միջագետաց Փին Բէյթ-Նուհարայի մասին, իսկ ասորագէտ Փին Բէյթ-Նուհարայի մասին տեղադրում էր Նինուէի դաշտաբաւոյ տեղադրում պահպանում, իսկ անուր բացատրում պահպանում կան Առնաղար բառով, որը նշանակում է «վաճառատեղի, շուկայ», ի տարբերութիւն նոյն տեղանուն Նոր Հատրա մեկնաբանութեան՝ տարբերելու համար նոյն անունով յայտնի միւս վայրերից<sup>53</sup>: Նրա սահմաններն էին, ըստ ասորագէտի, արեւմուտքից՝ Տիգրիսը, որը նրան բաժանում էր Արուաստանից, հարաւից՝ Մեծ Ջագրէի, որը նրան բաժանում էր Արուաստանից, իսկ հիւսիսից՝ Խաղիլը, իսկ հիւսիս-արեւելքից նուազ էր Մարգայից: Հիւսիս-արեւելքից նուազ էր Մարգայից, որը հին Ջագրէի Բեխայր լեռնաշղթան է, որը հին հեղինակների մօտ անուանուած է «Բա Նուհարայի լեռ»<sup>55</sup>: Յ. Մարկուարթը «Նոտարտայ»-ը համապատասխան է համար

52 J. B. Chabot. Synodicon Orientale. Paris, 1902, p. 272.  
53 Նոյն տեղում, էջ 669:  
54 J. Marquart. Erānšāhr. S. 22. А. Колесников. Иран в начале VII века, - «Палестинский сборник», Л., 1970, с. 110-111.  
55 Հ. Մելքոնեան, Գշ. աշխ., էջ 228:

րել Մոսուլի շրջանում գտնուող Բէյթ-Նու-հադրէին<sup>56</sup>, որի տեղը Հոֆմանը մատնացրոյց է արել Տիգրիսի ձախ ափին եւ էսկի-Մոսուլի դիմաց գտնուող Աւանա գիւղի հիւսիսակողմում մինչեւ Խարուր գետի ձախ ափը<sup>57</sup>: Մեր կարծիքով՝ Բէյթ-Նու-հադրայի մէջ մտնում էր նաեւ Նինուէից հարաւ-արեւմուտք ընկած Հատրա նշանաւոր քաղաքը, որը Իբն ալ Ֆակիհը յիշատակում է Սինջար-Շնգարի անապատում<sup>58</sup>: Նոյն հեղինակի մօտ պահպանուած Բանու-հադրան՝ որպէս Մոսուլի նահանգի գաւառներից մէկը, միանշանակ նոյնանում է Բէյթ-Նու-հադրային<sup>59</sup>: Բանու-հադրան համապատասխանում է Բալաղուրի Բահուղ-րային, որը նոյնպէս Մոսուլում էր<sup>60</sup>: Բէյթ-Նու-հադրան աղբիւրներում յիշատակուած է նաեւ Բա Հադրա ձեւով<sup>61</sup>, ինչը եւ կարող էր յիշեցնել Հատրա քաղաքը: Նու-հադրա տեղանունն բացատրութիւնների մէջ մեզ համար աւելի տրամաբանական է Ռ. Ֆրայի մեկնաբանութիւնը, համաձայն որի՝ nohodar (հայերէն՝ նախարար) «առաջին տեղը գրաւող» համեմատում է bitaxš-ի հետ եւ վերջինս ստուգաբանում որպէս «երկրորդ տեղի (կառավարի)»: Շարունակելով միտքը՝ ուսումնասիրողը աւելացնում է. «Եթէ այն շրջանը, որը յետագայում ասորական աղբիւրներում յայտնի է Բէյթ-Նու-հադրէ անունով, համապատասխանում է Ադիաբենէին կամ նրա արեւմտեան հատուածին, ապա կարող ենք nohodar տիտղոսը («պրեֆեկտ, կառավարիչ») դիտել որպէս Ադիաբենէի թագաւորի պարթեւական անունում»<sup>62</sup>: Շապուհ Ա-ի եռապետը արձանագրութեան մէջ յուճարէն

56 J. Marquart, ԱԶ. աշխ., էջ 22-23:  
 57 G. Hoffmann, ԱԶ. աշխ., էջ 208 եւ լսաշ.:  
 58 Տե՛ս Արաբական աղբիւրներ, Գ, էջ 483:  
 59 Նոյն տեղում:  
 60 Նոյն տեղում, էջ 299:  
 61 Հ. Մելքոնեան, ԱԶ. աշխ., էջ 228:  
 62 Բ. Фрай, Наследие Ирана, М., 1972, с. 256, 266.

տեքստի Ադիաբենէն համապատասխանում է պահլաւերէն Ntvshrkո-ին, միջին պարսկերէն Nvikhshkn-ին, որոնք Մ. Սպրենգլինգը վերականգնում է համապատասխանաբար Natūshīrakān եւ Nōtakhshirakan<sup>63</sup>: Այս վերականգնումները թոյլ են տալիս տեղանունն ամբողջական բացատրել որպէս Nōdardashīragān<sup>64</sup> եւ կապել Արբելայի հարաւ-արեւմուտքում գտնուող արքեպիսկոպոսարան Խազդայի հետ<sup>65</sup>, որը կառուցեց Արտաշիւր Ա-ն, եւ անուանուեց Բուտտ Արդաշիր<sup>66</sup>: Հետագայում այս քաղաքը Խազգա է անուանուել նոյն Խազգա գաւառի անունով, եւ շատ անգամ ասորական աղբիւրներում նոյնիսկ Խեղայաբ նահանգը հանդիպում է Խազգայ անունով<sup>67</sup>: Նշանակում է, որ Բուտտ Արդաշիր անունը, որն էլ Յ. Մարկուարտը ուղղել էր՝ Նոտ-Արտաշիրական, գործածական չի եղել եւ Սասանեանների հարստութեան սկզբնական շրջանում նրանց կողմից Նոտարտայ-Շիրական վերանուանուած Ադիաբենէի նոր անուանումը լայն տարածում չի ունեցել ու աստիճանաբար դուրս է եկել գործածութիւնից: Հետեւաբար, Նոտարտաշիրականը կապել հայկական աղբիւրների Նոր Շիրականի հետ սխալ է, քանի որ վերջինս ունեցել է վարչաքաղաքական այլ բովանդակութիւն:

2. դարում արդէն Բա Նու-հադրայի թեմից բաժանուած է Նինուէի թեմը եւ դառ-

63 M. Sprengling, Third Century Iran. Shapur and Kartir, Chicago, 1953, p. 14, 19. Տե՛ս Günter Honigmann E. et Maricq A., ԱԶ. աշխ., էջ 39 (ntvshrkո):  
 64 V. G. Lukonin, Political, Social and Administrative Institutions: Taxes and Trade, - "The Cambridge History of Iran", vol. 3 (2), London, 1983, p. 750, 760.  
 65 Հ. Մելքոնեան, ԱԶ. աշխ., էջ 225:  
 66 J. Fiey, Assyrie Chrétienne, v. I, Beyrouth, 1965, p. 47; Н. Пигулевская, Города Ирана в раннем средневековье, М.-Л., 1956, с. 157.  
 67 Հ. Մելքոնեան, ԱԶ. աշխ., էջ 225, ծնթ. 21:

նում առանձին եպիսկոպոսութիւն<sup>68</sup>, որից յետոյ, ըստ էութեան, Բա Նու-հադրայի եպիսկոպոսութեան իրաւասութիւնը պէտք է տարածուէր Նինուէից հիւսիս, հայկական տարածքների հարեւանութեամբ, չնայած միաբնակ հեղինակները Բա Նու-հադրայի թեմի անունը շարունակում են գործածել նախկին սահմաններում<sup>69</sup>:

Արբելայի թեմի յաջորդ եպիսկոպոսութիւնը, որի տեղադրութեան պարզաբանումը կարեւոր է մեզ համար, Բէյթ-Դասէնն է: Դասէն աշխարհը յիշատակում է Մար Մարիի վարքում<sup>70</sup>: Հոֆմանը Դասէնի տեղը որոշում էր Մեծ Զաբ գետի արեւմտակողմում եւ այժմեան Ամադիայի ու Գարայ լեռների կողմերում<sup>71</sup>: Շաբուն Բէյթ-Դասէնը տեղադրում էր Գարայ լեռների շրջանում (արաբների Ձէբէլ Դասէնը), այսինքն՝ Մեծ Զաբի արեւմուտքում, Ղամադիայի հարաւում<sup>72</sup>: Ն. Ադոնցը Դասէնը տեղադրում էր Ամադիա քաղաքի շրջակայքում եւ աւելացնում, որ Հաբէթարի սանջակում յայտնի է եզդիների մի ցեղ՝ tasani կամ dasani անունով<sup>73</sup>: Յ. Մանանդեանը, համաձայնելով Հոֆմանի հետ, իր աշխատութիւններից մէկում Դասէնը համապատասխան է համարել Ստրաբոնի Կալաբենէին, որի տեղը ենթադրել է Մեծ Զաբի արեւմտակողմում՝ այդ գետի եւ Խաբուր-Սուի միջեւ<sup>74</sup>: Իսկ Ֆին գրում էր, որ Դասէնի մէջ էր մտնում ամբողջ Ղամադիայի արեւելեան շրջանը՝ հարաւ-արեւելքը, եւ ընդգրկում համարեայ Մեծ Զաբի ամբողջ հովիտը, որն այժմ կոչւում է Զիբար, եւ տարածւում նրա երկայնքով աւելի հիւսիս՝

68 Նոյն տեղում, էջ 230:  
 69 Նոյն տեղում, էջ 234:  
 70 Նոյն տեղում, էջ 243:  
 71 G. Hoffmann, ԱԶ. աշխ., էջ 202-207:  
 72 J. B. Chabot, ԱԶ. աշխ., էջ 667:  
 73 Ն. Ադոնց, ԱԶ. աշխ., էջ 258:  
 74 Յ. Մանանդեան, Բնակական տեսութիւն..., էջ 302-303:

միաժամանակ նշելով, որ այս լեռնային երկիրը ասորական աղբիւրներում կոչւում է «Բէյթ Տուրէ», այսինքն՝ «լեռների աշխարհամաս» կամ «մարզ»<sup>75</sup>: Ս. Երեմեանը նոյնպէս Դասէն գաւառը տեղադրում էր ներկայիս Ամադիէի շրջանում<sup>76</sup>: Արաբաներկայիս Ամադիէի շրջանում Դասէնի եպիսկոպոսութիւնը Նինուէի, Բէյթ-Բագաշի, Հապոսութիւնը Նիւմիայի եպիսկոպիթայի, Նու-հադրայի, Ուրմիայի եպիսկոպոսութիւնների հետ մտնում էր Մոսուլի մետրապոլիտութեան մէջ՝ դուրս գալով Արբելայի մետրապոլիտի ազդեցութիւնից<sup>77</sup>: Եղիշէն, յիշատակելով Դասէն աշխարհը, այն կապում է Հայաստանի հարաւային սահմանների հետ, կորդուաց աշխարհի հարեւանութեամբ<sup>78</sup>: Դասնը յիշատակում է Իբն ալ Ֆակիհը՝ գրելով, որ Մոսուլի կառավարիչ Սուլամին նուաճում է «Մարջն ու նրա գիւղերը, Բանու-հադրայի հողն ու Դասիւնը եւ քրդերի բոլոր անառիկ բերդերը»<sup>79</sup>: Դասիւնը Դասնն է, իսկ Բանու-հադրան՝ Բէյթ-Նու-հադրան, հետեւաբար, ելնելով Դասնի վերը կատարած տեղադրութեան քննութիւնից, այն գտնուել է Նու-հադրա-Նոտարտայի հարեւանութեամբ՝ վերջինիցս արեւելք: Իբն ալ Ֆակիհը Դասիւնը յիշատակում է Մոսուլի նահանգի երկրների թւում<sup>80</sup>: Իբն ալ Ասիրը յիշատակում է Դասիւն լեռը Մոսուլի նահանգում<sup>81</sup>:

75 J. Fiey, Assyrie Chrétienne, v. II, Beyrouth, 1965, p. 787.  
 76 Ս. Երեմեան, ԱԶ. աշխ., էջ 49:  
 77 A. Atiya, A History of Eastern Christianity, London, 1968, p. 265.  
 78 Եղիշէ, վասն վարդաւայ եւ հայոց պատերազմին, աշխատասիրութեամբ է: Տէր-Մինասեանի, Երեւան, 1989, էջ 20, 102:  
 79 Արաբական աղբիւրներ, Գ, էջ 483:  
 80 Նոյն տեղում:  
 81 Արաբական աղբիւրներ, Բ, Իբն Ալ-սաիր, թարգմ. բնագրից, ստաշաբանը եւ ծագթագր. Ա. Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1981, էջ 149:



կարող ենք եզրակացնել, որ Նոտարայ, Շիրական երկրները չեն կարող նոյնանալ որպէս մէկ երկրանուն, քանի որ եղել են վարչաքաղաքական տարբեր միաւորներ, որոնցից Նուհադրան համապատասխանում էր Ադիաբենէի Մոսուլի եւ Նինուէի շրջանին՝ ընդգրկելով նաեւ սրանցից հիւսիս՝ մինչեւ հայկական տարածքներ ընկած Ադիաբենէի միւս շրջանները, իսկ Շիրականը՝ Նոր Շիրականի բղեշխութեան հարաւարեւմտեան մասին, որը Բաբգէն կաթողիկոսի նամակում աւանդոյթի ուժով շարունակում է կոչուել Նոշիրական՝ նկատի ունենալով Դասն, Նիհորական եւ Մահկերտ-Տուն երկրների տարածքը: Հետեւաբար, Նոշիրականի վերականգնումը Նոտ Արտաշիրական անընդունելի է: Ուրեմն, Բաբգէն կաթողիկոսի նամակում յիշատակուած Նոշիրականը՝ որպէս Նինուէ նահանգի մաս, եկեղեցական առումով մտել է Արբելայի թե-

մի մէջ, որի կազմում յիշատակուած են Բէյթ-Դասէնի եւ Բէյթ-Մահկարտի եպիսկոպոսութիւնները, հէնց որոնց էլ ուղղուած էր Հայոց կաթողիկոսի նամակը: «Աշխարհացոյց»-ում յիշատակուած Շիրականը վարչական առումով ընդգրկում է Դասն, Նիհորական եւ, թերեւս, Մահկերտ-Տուն երկրները: Եթէ Մահկերտ-Տունը նոյնանում է Մարծին վերականգնուած տեղանուանը, ապա Մահկերտ-Տունը խեղայարի մարզպանութեան մէջ հանդէս է եկել որպէս աւանդին շահր, այդ դէպքում Դասնը ու Նիհորականն էլ Շիրական անուան տակ նոյնպէս շահրի կարգավիճակով մտել են խեղայարի մարզպանութեան մէջ: Հետեւաբար Շիրական անուան տակ Քուստի խորուարանի կազմում այլ երկիր տեսնելը մերժում է եւ չի հաստատում աղբիւրների տեղեկութիւններով:

### ՊԱՀԼԱԽՈՒՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՈՒ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

#### Աշոտ Սաւուչարեան

Հայերէն վիմագրերի ժամանակագրական կարգը հնարաւորութիւն է ընձեռում հետեւելու ինչպէս Բագրատունեաց թագաւորութեան շրջանում, այնպէս էլ յետագայում այս կամ այն տիտղոսի զարգացման, մի ազնուականական տնից միւսին փոխանցուելու ճանապարհը: Արդէն ժ. դարի երկրորդ կէսից սկսած Բագրատունեաց պետութեան պատուազոյն տիտղոսները կրում եւ ամենաբարձր պաշտօնները, ոչ միայն աշխարհիկ, այլեւ հոգեւոր, վարում էին Պահլաւունեաց տոհմի ներկայացուցիչները: Ի դէպ, տակաւին քննութեան կարօտ է այն կարեւոր հանգամանքը, թէ ովքեր էին Պահլաւունիները եւ ինչպէս կարողացան հասնել այդ բարձր դիրքերին:

Բագրատունեաց Հայաստանի թերեւս ամենաառաջնակարգ իշխանների՝ Պահլաւունիների ազգաբանական հարցերը ուսումնասիրել կամ դրանց անդրադարձել են մի շարք հետազօտողներ՝ առաջ բերելով երկու հակադիր տեսակէտներ:

Ն. Ակինեանը, որն այդպէս յստակօրէն գատում է յետագայում Պահլաւունիների լքած տիրոյթներն ու տոհմանունը ժառանգած, նրանց վասալ, Ծաղկունեաց զաւառի տէր Ապիրատեանների ճիւղն ու կազմում երկուսի ազգաբանութիւնը, համաձայն տոհմի ազդեցիկ ներկայացուցիչ, հայ միջնադարեան ականաւոր գիտնական, իմաստաբան, քերականագէտ, ռազմական եւ քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի վկայութիւնների, Պահլաւունիների սերումը բխեցնում է կամսարական նախարարական տնից,<sup>1</sup> իսկ ազգատոհմի վերա-

ծնունդը, այնպիսի դասական, ինչպիսին Ղ. Ալիշանն է, վերագրում է ժ. դարին<sup>2</sup>: Ն. Աղոնցն էլ հայ վաղագոյն մատենագրական աղբիւրների հիման վրայ կամսարականներին համարում է Արշակունիներին համադն<sup>3</sup>:

Յարկաւ, այդ եւն հաստատում նաեւ վիմական աղբիւրները: Սանահնի արձանագրութիւններից մէկում ժԱ. դարի առաջին կէսի գործիչ, հայոց մարզպան Աբլղարիբը վկայակոչւում է որպէս «յազգէ Պահլաւունի, ի տանէ Արշակունեաց»<sup>4</sup>: Նշանաւոր սպարապետ, իշխանաց իշխան վահրամ Պահլաւունին Մարմաշէնի 1029 թ. վիմագրում իրեն յիշատակում է «որդի Գրիգոր իշխանի հայոց մեծաց, ի ցեղէ Պահլաւունի եւ ի զարմից սրբոյն Գրիգորի հայոց Լու-

թիւ 1-5, էջ 3: վերջին տարիներին Գ. Սարգսեանը կարեւոր բացառություններ ու տարանջատումներ է կատարել Պահլաւունիների եւ Ապիրատեանների ազգաբանական հարցերում (տե՛ս Գ. Սարգսեան, Գրիգոր-Ապիրատ Հասանեան, հիմնադիր կենտրոնի վանքի [վիմագրական] անվանումը, «Հին Հայաստանի մշակույթ», ժողովածու 12, Երեւան, 2002, էջ 107-112): Իսկ Կ. Մաթեոսեանը հորապարտաբար կամ Հասանեան իշխանատոհմի ծագումնաբանական ակունքները (տե՛ս Կ. Մաթեոսեան, Հագարամեայ կենտրոնի հիմնադրման պատմությունը», «Լեւոնիստ», 2004, էջ 77-91: Տե՛ս նոյնի Հարոց թատի վանքի եւ Ապիրատեան տոհմի պատմության հորապարտեալներ», Բանբեր Մատենադարանի, 17, Երեւան, 2006, էջ 148-167, նաեւ նոյնի Անի-Շիրակի պատմության էջեր, Երեւան, 2010, էջ 101-138):

2 Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարսպալ իւր, վեճատիկ, 1873, էջ 22-23:  
 3 Ն. Աղոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987, էջ 334:  
 4 Կ. Ղաֆադարեան, Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1957, էջ 97:

1 Ն. Ակինեան, Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեաց ազգաբանությունը, - ՀԱ, վիճակ, 1954.